# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ՊՐՈՖՏԵՍՏ ՍՊԸ-ն ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-25/21 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 3 | ABBOTT | Xience Pro A կամ Xience Pro S | Xience Pro A կամ Xience Pro S | ABBOTT | Կորոնար դեղապատ ստենտ, Ստենտի նյութը և կառուցվածքը - լազերով կտրված կոբալտ-քրոմի համաձուլվացքից կազմված գլան, ստենտի ծածկը՝ Էվերոլիմուս դեղանյութ արտազատող ծածկ: Ստենտի կառուցվածքը՝ 2.25-3.0 մմ տրամագծով ստենտն ունի երեք կարճ և երեք երկար ամրակներ՝ միացած ոչ գծային կապով: 3.5-4.0 մմ-ոց ստենտն ունի երեք կարճ և վեց երկար ամրակներ՝ միացած ոչ գծային կապով: Ստենտի եզրային օղը ձևավորված է սիմետրիկ ամրակներով՝ բարելավելու |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ուղղորդիչ կաթետերի դուրսբերումը: Ստենտի պատերի հաստությունը - ոչ ավել, քան` 0.0032”: Ստենտի երկայնածիգ ճկունությունը` գերազանց: Ստենտը ոչ ֆեռոմագնիսական է և ունի բարձր ճառագայթային ուժ: Մետաղական մակերեսի ընդարձակումը կատարվում է` 13.3%-ի սահմաններում (±1%) 3.0 մմ տրամագծի դեպքում, 12.8%-ի սահմաններում (±1%)`4.0 մմ-ի դեպքում: Լայնացումից առաջացած կարճացումը 0% է` 3.0 x 18 մմ ստենտի համար: Անկախ լայնացման աստիճանից չի գերազանցում ստենտի երկարության 5%-ը: Հետագա տեղաշարժման հավանականությունը ոչ ավել, քան` 4.4%, 3.0 x 18 մմ ստենտի համար: Ստենտի բացման նոմինալ ճնշումը` 11 atm (±1%), պայթման առավելագույն ճնշումը` 18 atm (բոլոր տրամագծերի ստենտերի համար): Անցման պրոֆիլը ոչ ավել, քան` 0.0425" (3.0 x 18), ծայրի մուտքի պրոֆիլը ոչ ավել, քան` 0.017": Բալոնի միջին չափսը` 0.041 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | դույմ կամ 1.04 մմ (±1%)՝ 3.0x18 մմ ստենտի համար: Բալոնը բարակ երկակի շերտով է, նյութը՝բազմաշերտ պեբաքս: Ուղղորդիչ կաթետերի ներքին նվազագույն տրամագիծը - 0.056 դյույմ կամ 1.4 մմ (բոլոր չափսի ստենտերի համար)։ Ստենտի դեղորայքային ծածկը բաղկացած է ակրիլային և ֆլյուրո պոլիմերներից, որոնք օգտագործվում են են անոթային կարի համար նախատեսված թելերի արտադրությունում: Դեղանյութի կոնցենտրացիան ստենտի մակերեսին, 88 µg/cm2 (±1%): Ստենտի աշխատանքային երկարությունը՝ ոչ պակաս քան 138սմ և ոչ ավել քան 145սմ: Կախված վիրահատվող անոթի տրամագծից ստենտի պահաջվող չափերն են ըստ տրամագծերի՝ 2.0, 2.25, 2.5, 2.75, 3.0, 3.5, 4.0 մմ: Բացված ստենտի մաքսիմալ տրամագիծը՝ 2.0-2.5-ը մինչև 3.25 մմ, 2.75-3.0-ը մինչև 3.75 մմ, 3.5-4.0-ը մինչև 4.5 մմ: Կախված վիրահատության ժամանակ հիվանդի անոթի վնասվածքի չափից |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ստենտի պահանջվող չաափերն են ըստ երկարության` 8, 12, 15, 18, 23, 28 մմ (2.0, 2.25, 2.5, 2.75, 3.0, 3.5, 4.0 մմ տրամագծերի դեպքում), 8, 12, 15, 18, 23, 28, 33, 38 մմ (2.5, 2.75, 3.0, 3.5, 4.0 մմ տրամագծերի դեպքում): Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար CE MARK կամ FDA որակի վկայական/ների առկայությունը պարտադիր է: Նոր է, չօգտագործված, գործարանային ստերիլ փաթեթավորմամբ: Ներառում է տեխնիկական ցուցանիշները, առանձնահատկությունները և օգտագործման կանոնները` գործարանային ձեռնարկի ձևով: Հանձնելու պահին ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն:Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ: Պատվիրատուն իրավունք ունի ըստ անհրաժեշտության վերադարձնել |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | կամ փոխել ապրանքի չափսը այլ չափսով, եթե առկա է ապրանքի ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 50%-ը: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО ПРОФТЕСТ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-25/21 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 3 | | | | | |